



## ԱՐՄԵՆ ՀԱՎՈՐՅԱՆ

«Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկի»  
գլխավոր հաշվապահ,  
տնտեսագիտության դոկտոր

## ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՇԱՐՃԱՌԻԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ՀԱՐԿՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

Տրանսֆերային գնագոյացումը արմատապես տարբերվում է շուկայական գնագոյացման գործընթացից այն առումով, որ այս դեպքում գները չեն ձևավորվում պահանջարկի և առաջարկի հավասարակշռմամբ: Որպես կանոն, տրանսֆերային գները գործում են կապակցված կազմակերպությունների միջև տեղի ունեցող գործարքներում և հետապնդում են միջխմբային շահեր: Հատկապես այն դրսևորվում է հարկման ոլորտում, երբ, տրանսֆերային գին սահմանելով, կապակցված կազմակերպությունները գործարքներ են իրականացնում և դրանով իսկ ձգտում հարկային պարտավորությունների կրճատման: Հետևաբար, ներկայումս վերազգային կազմակերպությունների նկատմամբ հարկային վերահսկողության տարբեր մեթոդներ են կիրառվում՝ նպատակ ունենալով բացահայտելու տրանսֆերային գների կիրառմամբ հարկային պարտավորությունները:

**Հիմնաբառեր.** կապակցված կողմեր, վերազգային կազմակերպություններ, հարկային բեռ, տրանսֆերային գնագոյացում

JEL: G28, H30

2018 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործում է նոր հարկային օրենսգիրքը, որը սահմանում է տրանսֆերային գնագոյացման կարգավորումները: «Տրանսֆերային գնագոյացումը» նոր հասկացություն է ՀՀ տնտեսավարողների և ոլորտը կարգավորողների համար, ինչը պահանջում է մասնագիտական հետազոտություն և վերլուծություն:<sup>1</sup>

<sup>1</sup> Տես ՀՀ հարկային օրենսգիրք, <https://www.arlis.am/>:

Տրանսֆերային գնագոյացման հիմնախնդիրները գործնականում առաջին հերթին դրսևորվեցին հենց հարկման ոլորտում, երբ պարզ դարձավ, որ բիզնես միավորները, հարկային պարտավորություններից խուսափելու համար, ստեղծում են վերազգային կազմակերպություններ:<sup>2</sup> Գործելով մի քանի երկրում, էականորեն միմյանցից տարբերվող հարկային դրույքաչափերով դաշտերում՝ վերազգային կազմակերպությունների մասնաձյուղերը հնարավորություն ստացան թեթևացնելու իրենց հարկային բեռը՝ միջխմբային գործարքներում սահմանելով տրանսֆերային գներ:<sup>3</sup>

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ **տրանսֆերային գնագոյացումը** փոխկապակցված հարկ վճարողների միջև իրականացվող վերահսկվող գործարքներում՝ ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման, սահմանված ֆինանսական ցուցանիշների որոշման ընթացակարգն է:<sup>4</sup>

Եվ պարտադիր չէ, որ նման դեպքերում տրանսֆերային գինը անպայմանորեն էապես շեղվի շուկայականից: Գործնականում այն կարող է սահմանվել այնպես, որ մոտ լինի շուկայականին, սակայն միաժամանակ ի գործ լինի հարկային բազան, հարկման բարձր դրույքաչափերի միջավայրից, տեղափոխելու դեպի ցածր դրույքաչափերով ոլորտ՝ դրանով իսկ նվազեցնելով վերազգային կազմակերպության հարկային համախմբված պարտավորությունները:<sup>5</sup>

Հարկման ոլորտում տրանսֆերային գնագոյացման մեխանիզմի գործունեությունը ավելի լավ պատկերացնելու համար ընդունենք, որ վերազգային կազմակերպությունը մեկ ամսվա ընթացքում արտադրում է 1 000 հատ համակարգիչ: Մայր գործարանը գտնվում է տնտեսապես զարգացած A երկրում, որտեղ արտադրվում են համակարգիչ բոլոր մասերը, իսկ տնտեսապես զարգացող B երկրում գործում է դուստր կազմակերպությունը, որտեղ միայն հավաքվում և կոմպլեկտավորվում են մայր գործարանից ստացված մասերը, և հենց այդտեղ էլ ձևավորվում են վաճառքի ենթակա համակարգիչները: Արտադրական նման սխեման հատուկ է կառուցվում՝ թեթևացնելու համար վերազգային կազմակերպության հարկային բեռը, քանի որ A երկրում շահութահարկի դրույքաչափը 30% է, իսկ B երկրում՝ 5%:

Այսպես, միջազգային շուկայում համակարգիչի վաճառքի գինը 3 000 ԱՄՆ դոլար է (\$), իսկ կազմակերպություններում միավորի թողարկման ինքնարժեքը՝ 1 800 (1 600՝ համակարգիչի մասեր + 200՝ կոմպլեկտավորման ծախսեր): Եթե համակարգիչները ամբողջությամբ կոմպլեկտավորվեին մայր գործարանում, ապա շահութահարկի ամսական գումարը կկազմեր՝ 1 000 հատ  $x (3 000 - 1 800) \times 30\% = \$360 000$ : Վերազգային կազմակերպությունը, համախմբված հարկային պարտավորությունները կրճատելու նպատակով, իր գործունեության հարկվող բազայի առյուծի բաժինը միտումնավոր տեղափոխում է B երկիր՝ միավոր համակարգիչի կիսաֆաբրիկատային կոմպլեկտի

<sup>2</sup> Տե՛ս **Назарова В.А.**, Трансфертное ценообразование и мотивация в управлении холдингом, //Бухгалтерский учет, 1 (134), 2016, էջ 146-148:

<sup>3</sup> Տե՛ս **Cooper J., Fox R., Loeprick J. and Mohindra K.**, Transfer Pricing and Developing Economies, World Bank Group, 2016, էջ 2-6, <http://dx.doi.org/10.1596/978-1-4648-0969-9>:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ հարկային օրենսգրքը, գլուխ 73, հոդված 361: <http://www.arlis.am/>:

<sup>5</sup> Տե՛ս **Бусце Р.**, Трансфертное ценообразование: основные проблемы (опыт Германии). URL: <http://www.nalog-forum.ru/php/content.php?id=772>:

գծով սահմանելով ընդամենը 1.700 ԱՄՆ դոլար տրանսֆերային գին այն պատրվակով, որ վաճառում է ոչ թե ամբողջական պատրաստի արտադրանք, այլ ընդամենը՝ կիսաֆաբրիկատ: Այս դեպքում արդեն վերազգային կազմակերպության ամբողջական պարտավորությունները շահութահարկի գծով կկազմեն.

A երկրում՝ 1 000 հատ կիսաֆաբրիկատային կոմպլեկտ.

$$1\,000 \times (\$1\,700 - \$1\,600) \times 30\% = \$\,30\,000,$$

B երկրում՝ 1 000 հատ համակարգիչ.

$$1\,000 \times [(\$3\,000 - (\$1\,700 + \$200))] \times 5\% = \$\,55\,000,$$

ընդամենը ամսական շահութահարկի պարտավորությունը՝ \$85 000:

Հարկ է նշել, որ այսպիսով վերազգային կազմակերպությունը, կիրառելով տրանսֆերային գին, հնարավորություն է ստեղծում՝ միջազգային շուկայում համակարգիչների վաճառքի արդյունքում ձևավորվող շահութահարկի պարտավորությունը նվազեցնել 360 000-ից մինչև 85 000 ԱՄՆ դոլար, քանի որ այդ գինը, փաստորեն, հարկային բազան բարձր դրույքաչափերի միջավայրից (A երկիր) տեղափոխեց հարկման ցածր դրույքաչափերի միջավայր (B երկիր): Ըստ այդմ՝ A երկրից արտադրանքի գծով փոխանցվող գին սահմանվեց համախմբված հարկ վճարող կազմակերպությունների միջև, որը մասնագիտական գրականությունում և օրենսդրական ակտերում ներկայանում է «տրանսֆերային գին» եզրույթով:<sup>6</sup>


Այսպիսով, տրանսֆերային գնով վերազգային կազմակերպությունները շեղվում են հարկման ընդգրկում բազայից՝ դրանով իսկ փորձելով խուսափել հարկային պարտավորություններից:<sup>7</sup> Ներկայացված օրինակում A երկրում գործող կազմակերպությունը կարող էր իր արտադրանքի թողարկումը ամբողջացնել և արտահանել միջազգային շուկա՝ վաճառքի, բայց այդ ճանապարհը հարկման առումով նախընտրելի չէր: Այդ իսկ պատճառով արտադրանքը միջազգային շուկա հասավ տարանցիկ ճանապարհով՝ տրանսֆերային վաճառքի գին սահմանելով շահութահարկի ցածր դրույքաչափ ունեցող B երկրում գործող և գնորդ հանդիսացող դուստր կազմակերպության համար, որն էլ պատրաստի արտադրանքը ամբողջովին վերավաճառեց միջազգային շուկայում, արդեն իսկ շուկայական գներով (տես գծապատկեր 1):

Ընդ որում, չի ենթադրվում, որ տրանսֆերային գինը սահմանվում է միայն նվազեցված արժեքով:<sup>8</sup> Այն կարող է սահմանվել նաև շուկայականից ավելի ուժեղացված արժեքով, երբ արհեստականորեն բարձր տրանսֆերային գնով արտադրանքը հարկային ցածր դրույքաչափեր կիրառող երկրից փոխանցվում է դեպի բարձր դրույքաչափեր ունեցող երկիր:<sup>9</sup>

Այսպես, վերոնշյալ օրինակում վերազգային կազմակերպությունը կարող է որոշում ընդունել՝ B երկրում իրականացնելու ոչ միայն համակարգչային մասերի կոմպլեկտավորում, այլև արտադրելու համակարգչային մոնիտոր-

<sup>6</sup> Տե՛ս **Лазарева Е.А.**, Внедрение системы трансфертного образования в России, Экономика и юриспруденция: электрон. научн. журн. 2015. № 6(17), <http://7universum.com/ru/economy/archive/item/2176>:  
<sup>7</sup> Տե՛ս **Кизимов А.С., Кузьмина Н.А.**, Об альтернативных методах трансфертного ценообразования //Налоговая политика и практика. 2012. N11. С. 78-80. URL: <http://elibrary.ru/download/86184365.pdf>:  
<sup>8</sup> Տե՛ս **Cooper J., Fox R., Loerprick J. and Mohindra K.**, Transfer Pricing and Developing Economies, World Bank Group, 2016, <http://dx.doi.org/10.1596/978-1-4648-0969-9>:  
<sup>9</sup> Տե՛ս **Пансков А.В.**, Трансферты внутри корпораций // Налоговая политика и практика. 2004. № 4. էջ 21-25:

ներ, որոնք թանկ գնով կփոխանցվեն A երկրում գործող կազմակերպությանը: Արդյունքում, մոնիտորների արտադրությունը B երկրում կհարկվի շահութահարկի նվազ դրույքաչափով, իսկ թանկ ինքնարժեքով մոնիտորը A երկրում կունենա հարկման ցածր բազա:



**Գծապատկեր 1.** *Տնտեսության իրական հատվածում տրանսֆերային գնադրացման մեխանիզմը՝ հարկման բազան բարձր հարկային բեռի միջավայրից դեպի ցածր դրույքաչափերով հարկման ոլորտ տեղափոխելիս<sup>10</sup>*

Փաստորեն, տրանսֆերային գները չեն թիրախավորվում միայն բարձր դրույքաչափերով հարկային դաշտից դեպի ցածր դրույքաչափերով հարկային միջավայր: Հարկային իրական պարտավորություններից խուսափելու նպատակով կազմակերպությունները կարող են դիմել հակադարձ գործընթացին՝ սահմանելով արդեն ոչ թե շուկայականից ցածր, այլ առավել բարձր տրանսֆերային գներ՝ դրանով իսկ ապրանքների հոսքը կազմակերպելով հարկային ցածր դրույքաչափերով միջավայրից դեպի բարձր դրույքաչափերով տնտեսավարման ոլորտ: Այս դեպքում արհեստականորեն ցածր հարկային բազան տեղափոխվում է բարձր դրույքաչափերով գործող տնտեսավարման միջավայր՝ դրանով իսկ թեթևացնելով կազմակերպության հարկային բեռը:<sup>11</sup>

Այսպես, կազմակերպությունը, որը գործում է 30% շահութահարկի դաշտում, զարգացած տնտեսություն ունեցող A երկրում արտադրում է ավտոմեքենաներ: Ավտոմեքենայի վաճառքի շուկայական գինն է 18 000 ԱՄՆ դոլար, իսկ թողարկման ինքնարժեքը ձևավորվում է տեխնոլոգիական հետևյալ շղթայով.

– թավք՝	\$4 000
– նստատեղեր՝	\$2 000
– շարժիչ՝	\$3 000
– կոմպլեկտավորող դետալներ՝	\$1 000
ընդամենը ինքնարժեք՝	\$10 000

<sup>10</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը:

<sup>11</sup> Ст. Кафтанников А.А., Трансфертное ценообразование: комментарий изменений Налогового кодекса РФ: метод. пособие. Челябинск, 2011. URL: [http://www.zaocl.as.sic.ru/media/i/othr/Metodicheskoe\\_posobie\\_TCO.pdf](http://www.zaocl.as.sic.ru/media/i/othr/Metodicheskoe_posobie_TCO.pdf):

Հետևաբար, երբ ավտոմեքենան շուկայում վաճառվի, կազմակերպության շահութահարկի պարտավորությունը մեկ ավտոմեքենայի գծով կկազմի.

$$(18\ 000 - 10\ 000) \times 30\% = \$2\ 400$$

Ձգտելով թեթևացնել հարկային բեռը՝ կազմակերպությունը վերակազմավորվում է վերազգային կազմակերպության՝ մասնաձյուղ բացելով մեկ այլ պետությունում, որտեղ շահութահարկի դրույքաչափը 5% է: Այս դեպքում արդեն շարժիչների արտադրությունը կազմակերպվում է գործող ցածր հարկային դրույքաչափի պայմաններում՝ կիրառելով տեխնոլոգիական և վաճառքի հետևյալ սխեման.

- մայր գործարանը ընդհանրապես հրաժարվում է շարժիչների արտադրությունից և դրանք ձեռք է բերում իր մասնաձյուղից՝ 7 000 ԱՄՆ դոլար տրանսֆերային գնով,
- մայր գործարանը շարժիչի մասերը 2 500 ԱՄՆ դոլար ինքնարժեքով և 4 000 ԱՄՆ դոլար տրանսֆերային գնով վաճառում է մասնաձյուղին,
- մասնաձյուղը, գնելով շարժիչի մասերը, կատարում է 500 ԱՄՆ դոլար կոմպլեկտավորման ծախսեր (որը, ի դեպ, պետք է արվեր մայր գործարանում) և արդեն 4 500 ԱՄՆ դոլար ինքնարժեքով և 7 000 ԱՄՆ դոլար տրանսֆերային գնով պատրաստի շարժիչը վաճառում է մայր գործարանին՝ դրա դիմաց շահութահարկ վճարելով հետևյալ հաշվարկով.

$$(7\ 000 - 4\ 500) \times 5\% = \$125:$$

Մայր գործարանը, այս դեպքում, արհեստականորեն նվազեցնում է հարկային բազան՝ շահութահարկ վճարելով տեխնոլոգիական հետևյալ շղթայով.

– թափք՝	\$4 000
– նստատեղեր՝	\$2 000
– շարժիչի ձեռք բերում՝	\$7 000
– կոմպլեկտավորող դետալներ՝	\$1 000
ընդամենը ինքնարժեք՝	\$14 000

Հետևաբար, մայր գործարանի կողմից միավոր ավտոմեքենայի վաճառքից շահութահարկի պարտավորությունը արդեն կկազմի.

$$(18\ 000 - 14\ 000) \times 30\% = \$1\ 200:$$

Իսկ տրանսֆերային գնագոյացման մեխանիզմի արդյունքում վերազգային կազմակերպության շահութահարկի համախմբված պարտավորությունը կներկայացվի հետևյալ կերպ.


շահութահարկ մայր կազմակերպությունում + շահութահարկ մասնաձյուղում = \$1 200 + \$450 + \$125 = \$1 775:

Այսպիսով, տրանսֆերային գործարքի հետևանքով միավոր ավտոմեքենայի վաճառքի հարկային բեռը վերազգային կազմակերպությունը էականորեն կնվազեցնի (տես գծապատկեր 2):

Հարկային բեռի նվազեցման ակնկալիքներով տրանսֆերային գնագոյացումը օգտագործվում է նաև տնտեսության ֆինանսական ոլորտում, մասնավորապես՝ բանկային համակարգում և նույն տրամաբանությամբ, ինչպես արվում է տնտեսության իրական հատվածում: Ընդունենք, որ առևտրային բանկը գործում է տնտեսապես զարգացող երկրում և շահութահարկ է վճարում 30% դրույքաչափով: Հաջորդ տարի բանկը նախատեսում է լրացուցիչ

ներգրավել 80 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով և 3% դրույքաչափով ֆինանսական միջոցներ և դրանք անմիջապես որպես վարկեր տեղաբաշխել 5% դրույքաչափով: Տոկոսային մարժայի նման պայմաններում շահութահարկի պարտավորությունը կկազմի.

$$(0,05 - 0,03) \times 80 \text{ մլն} \times 30\% = \$0,48 \text{ մլն:}$$



**Գծապատկեր 2.** *Տնտեսության իրական հատվածում տրանսֆերային գնագոյացման մեխանիզմը՝ հարկման բազան ցածր հարկային բեռի միջավայրից դեպի բարձր դրույքաչափերով հարկման ոլորտ տեղափոխելիս<sup>12</sup>*


Դիտարկենք, որ նման հարկային բեռից խուսափելու համար առևտրային բանկը նախատեսում է գալիք տարում վերաձել վերագրային կառույցի և մասնաձյուղ բացել մեկ այլ երկրում, որտեղ ֆինանսական կազմակերպությունները հարկվում են ցածր դրույքաչափով՝ 8%-ով: Հարկվող բազան, հարկային նպաստավոր գոտի տեղափոխելու նպատակով, մայր բանկը իր մասնաձյուղին ֆինանսական ռեսուրսներ է տրամադրում ոչ թե 5%-ով, այլ 4%-ով, իսկ վերջինս էլ իր հերթին այդ ռեսուրսները ֆինանսական շուկայում որպես վարկ նախատեսում է տեղաբաշխել շուկայական դրույքաչափով, այն է՝ 5%-ով:

Այս դեպքում, արդեն վերագրային ֆինանսական կազմակերպության վերաճած առևտրային բանկը կունենա շահութահարկի համախմբված պարտավորություն.

- բանկի գլխամասում.  
 $(0,04 - 0,03) \times 80 \text{ մլն} \times 30\% = \$0,24 \text{ մլն,}$
- օտարերկրյա մասնաձյուղում.  
 $(0,05 - 0,04) \times 80 \text{ մլն} \times 8\% = \$0,064 \text{ մլն:}$

<sup>12</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը:

Վերջապես, միջխմբային գործարքներում տրանսֆերային տոկոսային դրույքաչափի կիրառման արդյունքը գալիք տարում կակնկալվի որպես վերազգային բանկի շահութահարկի պարտավորության էական կրճատում (տե՛ս գծապատկեր 3):



**Գծապատկեր 3.** *Տնտեսության ֆինանսական հատվածում տրանսֆերային գնազոյացման մեխանիզմը՝ հարկման բազան բարձր հարկային բեռի միջավայրից դեպքի ցածր դրույքաչափերով հարկման ոլորտ տեղափոխելիս*<sup>13</sup>

Ինչպես տնտեսության իրական հատվածում, այնպես էլ ֆինանսական ոլորտում տրանսֆերային գներով ռեսուրսները, շուկայականից բարձր արժեքով, ցածր հարկային դրույքաչափերով միջավայրից հոսում են դեպի բարձր դրույքաչափերով տնտեսավարման միջավայր՝ դրանով իսկ տեղափոխվելով բարենպաստ հարկման դաշտ:<sup>14</sup>

Այսպես, առևտրային բանկը, որը իր գրանցման երկրում շահութահարկ է վճարում 35% դրույքաչափով, օդանավերի գծով ֆինանսական վարձակալության համար գործարք է կնքում ավիափոխադրողի հետ: Օդանավի ձեռք բերման արժեքը կազմում է 420 մլն ԱՄՆ դոլար, և վարձակալը 7 տարվա ընթացքում տարեկան վճարելու է 60 մլն ԱՄՆ դոլար, որից 50 միլիոնը՝ մայր գումար և 10 միլիոնը՝ տոկոսավճար: Ֆինանսական ռեսուրսների ներգրավման շուկայական դրույքաչափը կազմում է 3%: Հետևաբար, նման իրավիճակում առևտրային բանկում օդանավի ֆինանսական վարձակալության գծով շահութահարկի պարտավորությունը վարձակալության ողջ ընթացքում կազմելու է.

- տոկոսային ծախսեր (վարձակալության սպասարկման դիմաց ներգրավված միջոցների 3%-ով հավասարաչափ մարումներ)՝ \$67,4 մլն,
- տոկոսային եկամուտ՝ \$10 մլն x 7 տարի = \$70 մլն,
- շահութահարկի պարտավորություն՝  $(70 - 67,4) \times 35\% = \$0,91$  մլն:

Հարկման այս բեռը թեթևացնելու նպատակով առևտրային բանկը, մեկ այլ երկրում, որտեղ շահութահարկի դրույքաչափը բավականին ցածր է և

<sup>13</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը:


<sup>14</sup> Տե՛ս **Селезнева В.Ю.**, Механизм трансфертного ценообразования в многофилиальном коммерческом банке, //Экономический журнал ВШЭ, N1, 2002, էջ 68-69:

կազմում է 7%, բացում է մասնաձյուղ, որն էլ իր հերթին բանկի գլխամասին վարկ է տրամադրում օդանավի ֆինանսական վարձակալության սպասարկման համար՝ տարեկան 3,5% դրույքաչափով, այսինքն՝ վերջինիս կողմից ներգրավվող առավել թանկ ֆինանսական ռեսուրսներով: Ֆինանսական ռեսուրսների ներգրավման շուկայական դրույքաչափը կազմում 3%: Այս դեպքում շահութահարկի համախմբված պարտավորությունը վերազգային բանկում կկազմի՝

բանկի գլխամասում.

- տոկոսային ծախսեր, որոնք 3,5%-ով և հավասար չափաբաժնով որպես պարտավորություն հաշվեգրվել են մասնաձյուղին՝ \$68,6 մլն,
- տոկոսային եկամուտ՝ \$10 մլն x 7 տարի = \$70 մլն,
- շահութահարկի պարտավորություն՝  $(70 - 68,6) \times 35\% = \$0,49$  մլն, օտարերկրյա մասնաձյուղում.
- տոկոսային եկամուտ՝ \$68,6 մլն,
- տոկոսային ծախսեր՝ \$67,4 մլն,
- շահութահարկի պարտավորություն՝  $(68,6 - 67,4) \times 7\% = \$0,084$  մլն, ընդամենը վերազգային կազմակերպության շահութահարկի պարտավորությունը կկազմի՝  $0,49 + 0,084 = \$0,574$  մլն:

Հետևաբար, վերազգային բանկի ներխմբային գործարքներում տրանսֆերային գնի կիրառումը էականորեն կկրճատի վարձատուի հարկային բեռը շահութահարկի գծով ( $0,574 < 0,91$ ):



**Գծապատկեր 4.** *Տնտեսության ֆինանսական հատվածում տրանսֆերային գնադր-  
յացման մեխանիզմը՝ հարկման բազան ցածր հարկային բեռի մի-  
ջավայրից դեպքի բարձր դրույքաչափերով հարկման ոլորտ  
տեղափոխելիս*<sup>15</sup>

<sup>15</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը:



### Օգտագործված գրականություն

1. ՀՀ հարկային օրենսգիրք, <https://www.arlis.am/>:
2. Назарова В.А., Трансфертное ценообразование и мотивация в управлении холдингом, // Бухгалтерский учет, 1 (134), 2016.
3. Буссе Р., Трансфертное ценообразование: основные проблемы (опыт Германии). URL: <http://www.nalog-forum.ru/php/content.php?id=772>.
4. Лазарева Е.А., Внедрение системы трансфертного образования в России, Экономика и юриспруденция: электрон. научн. журн. 2015. № 6(17), <http://7universum.com/ru/economy/archive/item/2176>.
5. Кизимов А.С., Кузьмина Н.А., Об альтернативных методах трансфертного ценообразования // Налоговая политика и практика. 2012. N11. с. 78-80. URL: <http://elibrary.ru/download/86184365.pdf>.
6. Пансков А.В., Трансферты внутри корпораций // Налоговая политика и практика. 2004, № 4.
7. Кафтанников А.А., Трансфертное ценообразование: комментарий изменений Налогового кодекса РФ: метод. пособие. Челябинск, 2011. URL: [http://www.zaocl.as.sic.ru/media//othr/Methodicheskoe\\_posobie\\_TCO.pdf](http://www.zaocl.as.sic.ru/media//othr/Methodicheskoe_posobie_TCO.pdf).
8. Селезнева В.Ю., Механизм трансфертного ценообразования в многофилиальном коммерческом банке // Экономический журнал ВШЭ, N1, 2002.
9. Cooper J., Fox R., Loeprick J. and Mohindra K., Transfer Pricing and Developing Economies, World Bank Group, 2016, <http://dx.doi.org/10.1596/978-1-4648-0969-9>.

**АРМЕН АКОПЯН**

Главный бухгалтер “Акба- кредит Агриколь” банка,  
доктор экономических наук

***Мотивации трансфертного ценообразования и их проявление в сфере налогообложения.***– Трансфертное ценообразование радикально отличается от рыночного ценообразования тем, что цены здесь не уравновешены спросом и предложением. Как правило, трансфертные цены действуют в сделках между аффилированными лицами и служат в основном интересам компании. Особенно это проявляется в сфере налогообложения, когда устанавливая трансфертные цены, связанные организации совершают сделки между собой, и тем самым уменьшают налоговые обязательства. Как следствие, в настоящее время различные методы налогового контроля применяются к транснациональным организациям для раскрытия налоговых обязательств в сфере применения трансфертных цен.

***Ключевые слова:*** аффилированные лица, транснациональные организации, налоговое бремя, трансфертное ценообразование.

JEL: G28, H30

**ARMEN HAKOBYAN**

Chief Accountant at “Acba-Credit Agricole” Bank,  
Doctor of Economics

***Motivations of Transfer Pricing and its Manifestation in Taxation Sphere.***– Transfer prices are radically different from market prices, as transfer prices are not balanced by supply and demand. As a rule, transfer prices operate in transactions between related parties and pursue interests between companies. This is particularly evident in taxation, when using the transfer price, interconnected organizations make transactions among themselves, and thereby reduce their tax liabilities. Consequently, various methods of tax control are currently applied for transnational organizations to disclose tax liabilities when implementing transfer prices.

***Key words:*** related parties, transnational organizations, tax burden, transfer pricing.

JEL: G28, H30